ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ-ի կողմից 2019 թվականի 2-րդ եռամսյակում ՀՁ-ԲՄԸ-ԱՊՁԲ/ՓԻ-09/14.05.19-ԱՄ ծածկագրով իրականացված «Փայլաթիթեղով 4մմ հաստությամբ 730 քառ.մ իզոգամ» գործարքի մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ 2019

<u>Մոնիթորինգի իրականացման հիմքը՝</u> ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 25-ի №207Ա որոշման №1 հավելվածով հաստատված՝ հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգ:

<u>Մոնիթորինգի օբյեկտը՝</u> «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ:

<u>Մոնիթորինգի առարկան՝</u> «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ-ի կողմից 2019 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում իրականացված գնումների առանձին գործարքները:

<u>Մոնիթորինգի նպատակը՝</u> Ընկերության կողմից կատարված գնումների առանձին գործարքների արդյունավետության ուսումնասիրություն և համապատասխանության գնահատում Հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի №391Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում №2) սահմանված լրացուցիչ պահանջներին:

<u>Մոնիթորինգի իրականացման ժամկետը՝</u> 2019 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2019 թվականի նոյեմբերի 15-ը:

<u>Մոնիթորինգի մեթոդաբանությունը՝</u> «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ-ի գնումների առանձին գործարքների մոնիթորինգն իրականացվել է ընկերության կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրության, գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարի ընտրության ընթացակարգի մոնիթորինգի միջոցով:

«Փայլաթիթեղով 4մմ հաստությամբ 730 քառ.մ իզոգամ» մրցույթ

«Հրազդանի Էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ-ն՝ համաձայն 2019 թվականի գնումների պլանի, 14.05.2019 թվականի ՀՁ-ԲՄԸ-ԱՊՁԲ/ՓԻ-09/14.05.19-ԱՄ ծածկագրով մրցութային հանձնաժողովի №09/14.05.19 արձանագրությամբ հաստատված հրավերի, 2019 թվականի մայիսի 15-ին կայանի արտադրական շենքերի հարթ տանիքների նորոգման աշխատանքները կատարելու համար «գնանշման հարցում» ընթացակարգով հայտարարել է «Փայլաթիթեղով 4մմ հաստությամբ 730 քառ.մ իզոգամ» մրցույթ՝ մրցութային հայտերի ներկայացման ժամկետ սահմանելով մինչև 2019 թվականի մայիսի 22-ը: Մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրը կնքելուց հետո 20 օրացուցային օր:

Հայտարարությունը ֆինանսների նախարարության էլեկտրոնային տեղեկագրում հրապարակվել է 2019 թվականի մայիսի 15-ին, իսկ ընկերության կայքում հայտարարությունը բացակայում է:

Որպես մինչև մրցույթի հայտարարումը իրականացրած շուկայի ուսումնասիրություն ընկերությունը ներկայացրել է մեկ կազմակերպության կողմից տրամադրված «2019 թվականի գնացուցակ» վերտառությամբ գրություն, որը կնքված կամ ստորագրված չէ, ինչը ենթակա է պարզաբանման:

Մրցույթի հայտարարումից հետո հայտ է ներկայացրել 2 մասնակից՝ «Մաստեր Ռուբերոիդ» ՍՊԸ-ն և «Տեխնոսնաբ» ՍՊԸ-ն:

Ընկերության անվանումը	**Առաջարկած գին հազար դրամ ներառյալ ԱԱՀ**
1	**2**
«Մաստեր Ռուբերոիդ» ՍՊԸ	839,5
«Տեխնոսնաբ» ՍՊԸ	1 204,5

«Մաստեր Ռուբերոիդ» ՍՊԸ-ն 22.05.2019 թվականի №11/22.05.19 արձանագրությամբ հաղթող է ճանաչվել, որի հետ 2019 թվականի հունիսի 3-ին կնքվել է պայմանագիր՝ 839,5 հազար դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

ՀՁ-ԲՄԸ-ԱՊՁԲ/ՓԻ-09/14.05.19-ԱՄ ծածկագրով իրականացված «Փայլաթիթեղով 4մմ հաստությամբ 730 քառ.մ իզոգամ» բաց մրցույթի փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հարկ է փաստել, որ.

1. Ընկերության մրցակցային ձևերով իրականացվող գնումների մասին Գ1 հաշվետվության մեջ նշված գործարքն ընդգրկված է «բաց մրցույթով գնում» ընթացակարգով իրականացվող գնումների բաժնում, սակայն փաստացի իրականացված գնումների մասին Գ2 հաշվետվության մեջ գործարքը «գնանշման հարցման» ընթացակարգով իրականացված գնումների բաժնում է: Հարկ է նշել, որ ընկերության կողմից ներկայացվող հաշվետվությունները որոշակի դեպքերում անճշտություններ են պարունակում, ուստի անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել հետագայում դրանք բացառելու նպատակով:
2. Մրցույթի կազմակերպման մասին հայտարարությունը ընկերության կայքում բացակայում է, ինչը կարող է հանդիսանալ հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի №391Ա որոշմամբ հաստատված հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների 14-րդ կետի հնարավոր խախտում:
3. Որպես մինչև մրցույթի հայտարարումը իրականացրած շուկայի ուսումնասիրություն ընկերությունը ներկայացրել է մեկ կազմակերպության կողմից տրամադրված «2019 թվականի գնացուցակ» վերտառությամբ գրություն, որը կնքված կամ ստորագրված չէ, ինչը ենթակա է պարզաբանման:
4. Պայմանագրով սահմանվել է վճարման ողջամիտ ժամկետ:

Այս համատեքստում հարկ է նշել, որ գնումների գործընթացների թերի կազմակերպման արդյունքում շուկայականից բարձր գներով ձեռք բերված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքները (շուկայական գները գերազանցող չափով) հաշվի չեն առնվի ընկերության սակագներում:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ/ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹ

Ընկերության անվանումը «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ

Գնման անվանումը Փայլաթիթեղով 4մմ հաստությամբ 730 քառ.մ իզոգամ

Գնման ծածկագիրը ՀՁ-ԲՄԸ-ԱՊՁԲ/ՓԻ-09/14.05.19-ԱՄ

Գնման ձևը Բաց մրցույթով գնում

ԲՈԼՈՐ ՓՈՒԼԵՐԸ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
1	Համարժեք և համապատասխան գրառումները պահպանվում են գնումների գործընթացի ողջ ընթացքում և բավարար տեղեկատվություն են տրամադրում, ինչը թույլ է տալիս աուդիտ կամ անկախ ստուգում իրականացնել	☑	☐	☐	

ԳՆՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
2	Գնման հայտը հաստատել է կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը կամ վերջինիս կողմից լիազորված անձը	☐	☐	☑	Գնման հայտը հաստատել է գլխավոր ճարտարագետը:
3	Գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրությունը ճիշտ է կատարվել	☑	☐	☐	Ընկերության մրցակցային ձևերով իրականացվող գնումների մասին Գ1 հաշվետվության մեջ նշված գործարքն ընդգրկված է «բաց մրցույթով գնում» ընթացակարգով իրականացվող

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
					գնումների բաժնում, սակայն փաստացի իրականացված գնումների մասին Գ2 հաշվետվության մեջ գործարքը «գնանշման հարցման» ընթացակարգով իրականացված գնումների բաժնում է:
4	Մինչև գնումների հրավերների հրապարակելը իրականացվել է համապատասխան շուկայի ուսումնասիրություն (փաստաթղթերը կցված են)	☐	☐	☑	Որպես մինչև մրցույթի հայտարարումը իրականացրած շուկայի ուսումնասիրություն ընկերությունը ներկայացրել է մեկ կազմակերպության կողմից տրամադրված «2019 թվականի գնացուցակ» վերտառությամբ գրություն, որը կնքված կամ ստորագրված չէ:
5	Գնման գործընթացի արդյունավետ իրականացման, ոչ մրցութային եղանակով գնումների ծավալի նվազեցման նպատակով՝ ընկերությունը իր վեբ կայքում և գնումների էլեկտրոնային տեղեկագրուում հրապարակելուց բացի դիմե՞լ է արդյոք այլ միջոցների մասնակիցների շրջանակը ընդլայնելու և նրանց միջև մրցակցության խրախուսման համար	☐	☑	☐	Մրցույթի կազմակերպման մասին հայտարարությունը ընկերության կայքում բացակայում է:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
6	Ապահովվել են հավասար մրցակցային պայմաններ հնարավոր մասնակիցների համար	☑	☐	☐	
7	Գնման առարկայի բնութագիրը հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը	☐	☑	☐	
8	Գնումը օբյեկտիվորեն հիմնավորված է և համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է	☑	☐	☐	

9	Մանրամասն ներկայացված են գնման ընթացակարգի փաստաթղթերը	☑	☐	☐
10	Պատշաճ ձևով ներկայացված են ապրանքների տեխնիկական բնութագրերը, իսկ աշխատանքների կամ ծառայությունների դեպքում՝ ամբողջական նկարագրությունը	☑	☐	☐
11	Ամբողջությամբ և հստակ նկարագրված են ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարմեկնաբանությունը	☑	☐	☐
12	Գնման առարկայի հատկանիշները պահանջ կամ հղում են պարունակում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրի, էսքիզի կամ մոդելի, ծագման երկրի, կոնկրետ աղբյուրի կամ արտադրողի	☐	☑	☐

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
13	Հայտերի գնահատման ընթացակարգը ընթացել է արդար և անկողմնակալ	☑	☐	☐	
14	Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին	☑	☐	☐	
15	Հայտերի գնահատման ժամանակ ապահովվել է հատուցում արժեքի դիմաց սկզբունքը	☑	☐	☐	

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
16	Պայմանագրի գնի հաշվարկը ներառում է տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը)	☑	☐	☐	

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
17	Սահմանվել է վճարման ողջամիտ ժամկետ	☑	☐	☐	
18	Գնման պայմանագիրը կատարվել է պատշաճ մակարդակով	☑	☐	☐	
19	Գնման առարկայի արժեքը համապատասխան է շուկայական արժեքին	☐	☐	☑	Որպես մինչև մրցույթի հայտարարումը իրականացրած շուկայի ուսումնասիրություն ընկերությունը ներկայացրել է մեկ կազմակերպության կողմից տրամադրված «2019 թվականի գնացուցակ» վերտառությամբ գրություն, որը կնքված կամ ստորագրված չէ: